ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՏԱՐԵՄՈՒՏԻ ՊԱՏԳԱՄԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ՝ ՀԵՌԱՐՁԱԿՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ

(31 դեկտեմբեր 1999 թ.)

Սիրելի ժողովուրդ հայոց.

Տարեմուտ է վերստին: Նոր՝ 2000 թվական մուտք ենք գործում՝ թեթևացած հրաժեշտ տալով 1999 թվականին, որ ամեն դրականով հանդերձ մեր պատմության մեջ մնալու է որպես մեծ փորձության ու ցավալի կորուստների տարի: Դեռ չեն ամոքվել մեր հոգիները ցավից ու տխրությունից Գարեգին Ա Հայոց Հայրապետի անժամանակ մահվան և Ազգային ժողովի նախագահ Կարեն Դեմիրճյանի, վարչապետ Վազգեն Սարգսյանի ու պետական բարձրաստիճան վեց պաշտոնյաների ողբերգական սպանության: Մտահոգ

ենք ամենքս: Հայրենիքում ներքաղաքական լարված վիճակը, տնտեսական և ընկերային կյանքի վճիռների սպասող դժվարին ու բարդ խնդիրները հուզում և խորապես անհանգստացնում են մերազնյա զավակաց ամենուր: Սակայն լավատեսությամբ են համակված մեր հոգիները, քանզի տարեմուտը դարակազմիկ է և նշանավորված մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի աշխարհ գալու 2000-ամյա տարեդարձով: Համայն քրիստոնյա աշխարհի հետ մենք ևս, սիրելի բարեպաշտ հայորդիք, ցնծությամբ ու սիրով տոնախմբելու ենք Ամանորն ու Սուրբ Ծնունդը՝ հազարամյակի վերջին տարին հաջողություններով ու հաղթանակներով պսակելու աներկրա հավատով:

Քրիստոսով իմաստավորված կենաց ճանապարհը 2000 տարի անցել ենք՝ հաղթահարելով բազում փորձություն ու դժվարություն. «Հաւատ քո կեցուսցէ զքեզ»: Աներեր վստահությամբ ստանձնել ենք ամենայն զրկանքներ վասն հավատի, վասն հայրենյաց: Այսօր վերահաստատված Հայոց նոր անկախությունը, Արցախի ազատության անօտարելի իրավունքը ձեռք ենք բերել ապահով, երջանիկ գալիքի ամենակարևոր գրավականներից մեկը: Մեր երկիրը զորացնելու, մեր կյանքը բարօր դարձնելու սրբազան պատասխանատվության հանձնառությունը մղում է մեզ սիրով միաբանության, խաղաղ, ստեղծագործ կյանքի, որպեսզի 3-րդ հազարամյակ մուտք գործենք վաստակյալ իրավունքով մեր տեղը հաստատած ժողովուրդների մեծ ընտանիքում:

Լավատես եմ որպես Հայոց Հայրապետ: Հավատում եմ մեր ժողովրդի ստեղծարար ուժին, հանճարեղ մտքին ու կառուցող բազկին, հպարտ եմ նրա կենսահաստատ ոգով, զոհաբերելու, համբերելու, հաղթահարելու և հաղթելու կամքով, լի եմ մխիթարությամբ, քանզի նեղությունների ու հոգսերի մեջ լցված ենք հույսով, և ամուր է գալիքի հանդեպ մեր հավատը՝ խարսխված աստվածային Սիրույն, որ ոչ երբեք անկանի:

Նոր տարվա շեմին, նոր հազարամյակի արշալույսին, երբ հրաժեշտ ենք տալիս մեր կյանքի որոշակի մի ժամանակահատվածի, ինքնաբերաբար հակվում ենք անդրադառնալու և գնահատելու անցածը, ապրված օրերի միջից ընտրելու անհրաժեշտը, արդյունավետը և մերժելու անտեղի վատնվածը, անօգտակարը:

20-րդ դարը մարդկային պատմության մեջ նշանավորվեց գիտական աննախընթաց նվաճումներով: Մարդը նյութական աշխարհի ճանաչողության մեջ հաճախ մոռացավ Աստուծո գոյությունը, անտեսեց, որ անհրա-

ժեշտ է հավասարազոր և առավել ևս զորացնել հոգևոր աշխարհը իր կյանքի: Նոր դարը կարոտ է հոգևորով իմաստավորման, քրիստոնեական բարոյականի վերարժևորման, որպեսզի գիտության նվաճումները ծառայեն միայն բարիքի ստեղծմանը, մարդկային երջանկությանը: Քաղաքակրթությունը փակուղի է մտնում, երբ չենք տեսնում, որ արարչագո՛րծ է տիեզերքը, ուր ամենայնը շաղկապված է ներդաշնակորեն, ուր ամենայնը բարիք է ծնում, երբ մենք Աստծուց մեզ շնորհված կամքի ազատությամբ ընտրում ենք բարին, առաքինին, արդարն ու ճշմարիտը՝ Աստուծո կամքը:

Արդ, սիրելի զավակունք հայոց, զորացնենք քրիստոնեական մեր հավատքը՝ բարոյականության բյուրեղյա, զուլալ ակունքը ազգային-հասարակական մեր կյանքի, որպեսզի հավատավոր գործերով իրական դարձնենք Հայրենի մեր երկիրը շենացնելու և մեր ժողովրդի բարօր գալիքը կերտելու Հույսն ու Հավատը, որպեսզի Բարձրյալի օրհնությունը հանապազօր իջնի մեր հողին և ուղեկից լինի մեզ ամենուր՝ ի Հայաստան, հԱրցախ և ի Սփյուռս աշխարհի:

Տարեմուտի անդրանիկ Մեր աղոթքն ենք առաքում առ Տերն Ամենակալ, որ խաղաղ ու ապահով պահի աշխարհը համայն, Հայաստան և Արցախ Հայրենիքը մեր, պահպանի և իմաստությամբ առաջնորդի հայրենի իշխանությունները, մեր ժողովրդի բոլոր զավակաց պարգևի ապահովություն, ստեղծագործ կյանքի ձեռքբերումներ ու հաղթանակներ՝ Հայոց Եկեղեցու մշտական օրհնության ներքո: Թող աստվածապարգև Սերը թագավորի մեր հոգիներում, ընտանեկան բոլոր հարկերից ներս և շաղախը դառնա մեր ժողովրդի միասնության: Սիրով փոխըմբռնում, բարի կամեցողություն, եղբայրաբար համագործակցություն բոլոր ժողովուրդներին, որպեսզի «ողորմութիւն և ճշմարտութիւն հանդիպեսցին, արդարութիւն և խաղաղութիւն համբուրեսցին»:

Շնորհավոր Նոր տարի:

«Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ Ձեզ և ընդ ամենեսեանս. ամէն»: